ԵՄ – ՀԱՅԱՍՏԱՆ ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳԻՐ

Գործողություն 4.4

Տարեկան տվյալների արդյունքների վերանայում

Սոցիալական բացառումների վիճակագրություն

Երևան, 2017թ. ապրիլի 3-7-ը

DANMARKS STATISTIK

Պարտադիր արդյունքներ

Պարտադիր արդյունք ՊԱ5 կապված սույն գործողության հետ

Ներկայացված և հաշվարկված սոցիալական բացառումների վիճակագրություն

Չափանիշներ

- Նախագծված սոցիալական բացառումների փորձնական հետազոտության հարցաթերթ (2015թ. հոկտեմբեր)
- Իրականացված փորձնական հետազոտություն (2015թ. դեկտեմբեր)
- Փորձարկման հաշվարկված արդյունքներ (2015թ. դեկտեմբեր)
- Սոցիալական բացառումների վերաբերյալ ցուցանիշների ներդրված համակարգ (2017թ. հուլիս)

4.4 գործողության նպատակը և սպասվող արդյունքը

Նպատակը

- Տարեկան արդյունքների վերլուծություն
- Տվյալների որակի վերանայում
- Հարցաթերթի վերանայում
- Ցուցանիշների նույնականացում
- Հրապարակման և տարածման քննարկում
- Քննարկումներում համապատասխան շահառուների ներգրավում

Սպասվող արդյունքներ

- Առաքելության հաշվետվություն հարցաթերթի և տվյալների որակի վերաբերյալ մեկնաբանություններով, կանոնավոր հրապարակման և տարածման պլան
- Հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագրի պլանավորում
  - 4.5-ը պլանավորված է 2017թ. հունիսին (ապագայի համար ձեռքբերումների և առաջարկությունների ստուգողական դիտարկում)

Եզրակացություններ (1)

- ԵՄ նյութական զրկվածության հարցերի տվյալները հաջողությամբ հավաքագրվել են 2016թ. ՏՏԿԱՀ հետազոտությամբ
- Տվյալների որակը շատ լավն է: Հավաքագրված տվյալները կարծես թե համապատասխանում են այլ հիմնական տեղեկությունների հետ, ինչպիսին է տնային տնտեսությունների ծայրը ծայրին հասցնելու կարողությունը
- Հավաքագրված տվյալները տալիս են անհրաժեշտ տեղեկատվություն հուսալի միջազգային համադրումներ կատարելու համար

Եզրակացություններ (2)

- Որոշ նախնական աղյուսակներ ցույց են տալիս զրկվածության բարձր մակարդակ Հայաստանում: Մի քանի հարցի վերաբերյալ, հնարավոր է, անհրաժեշտ լինի լրացուցիչ վերլուծություն
- Վավերականությունը և ներքին փոխկապակցվածությունը պետք է կանոնավոր կերպով ստուգվեն: Վավերականությունը պետք է ստուգել աղքատության այլ ցուցանիշների վերաբերյալ աղյուսակների խաչաձև հաշվարկների միջոցով
- Պետք է գնահատվի ցուցանիշների համապատասխանությունը հայկական կոնտեքստին

Եզրակացություններ (3)

- Ե՛վ վերլուծության և՛ տարածման համար համապատասխան աղյուսակների կազմումը պահանջում է շատ աշխատանք և տեխնիկական հմտություններ: Միայն SS վարչության վրա հիմնվելը կարող է ուշացնել գործընթացը:
  Տնային տնտեսությունների հետազոտության տվյալների հետ աշխատելու նպատակով համակարգչային ծրագրերի գծով ավելի շատ տեղական հմտությունների առկայությունը ցանկալի կլիներ

Առաջարկություններ (1)

- Համաձայն ԱԵ փորձագետների առաջարկությունների՝ ՀՀ ԱՎԾ-ն զրկվածության ցուցանիշների վերաբերյալ արդյունքները խորը վերլուծելու կարիք ունի
- Սա կարող է իրականացվել ուսումնասիրելով հարցազրույցի փորձառությունները՝ կապված այն հարցերի հետ, որոնք տվել են անսպասելի արդյունքներ և մյուս առնչվող ցուցանիշների հետ խաչաձև ստուգումների միջոցով (օրինակ՝ ուրբանիզացիա, եկամուտ և սպառում), ինչը կօգնի ստուգել արդյունքների հավաստիությունը
- ՀՀ ԱՎԾ-ին խրախուսվում է նախքան հաջորդ առաքելությունը հանդես գալ ազգային ցուցանիշների վերաբերյալ նոր առաջարկություններով և դիտարկել հայկական կոնտեքստի համար ԵՄ հարցերի համապատասխանությունը

Առաջարկություններ (2)

- Հետազոտության տվյալներն ապահովել են շատ հետաքրքիր արդյունքներ և պետք է տարածվեն ինչ-որ եղանակով
- Սակայն նաև կարևոր է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն վստահ լինի որ արդյունքները հուսալի են և պատրաստ լինի բացատրել արդյունքները:
- Արդյունքները պետք է ուղեկցվեն որակի զեկույցով, որը նկարագրում է ընդգրկվածությունը, վիճակագրական անորոշությունը և կողմնապահության ռիսկը, որը կարող է ազդել արդյունքների վրա

Առաջարկություններ (3)

- Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնում տվյալները վերլուծելու և մշակելու նպատակով ավելի շատ հմտությունների կարիք է նկատվում համակարգչային ծրագրից օգտվելու համար
  Սա կօգնի բաժնին դառնալ շատ ավելի անկախ SS բաժնի աշատակազմից՝ հիմնական հաշվարկների և աղյուսակների կազմման գծով աջակցության առնչությամբ
- Ընդհանուր առմամբ ՀՀ ԱՎԾ-ն պետք է դիտարկի ստանդարտ համակարգչային ծրագրի կիրառումը վիճակագրական վերլուծության և արտադրման համար, որը կարող է ներդրվել բոլոր բաժիններում և զուգակցվել հիմնական աղյուսակների կազմման և այլնի վերաբերյալ ներքին վերապատրաստման դասընթացներով

Տնային աշխատանք և ժամանակացույց (1)

- 2017թ. ապրիլի 7-ին՝ վերապատրաստում ՀՀ ԱՎԾ ՏՏ փորձագետի և տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի հետ ցուցանիշները կազմելու ձևերի ուսուցման նպատակով

- Նախքան հունիսին կայանալիք հաջորդ առաքելությունը ՀՀ ԱՎԾ-ն պետք է վերլուծի ԱԵ փորձագետների կողմից առաջարկված ցուցանիշների արդյունքները

Տնային աշխատանք և ժամանակացույց (2)

- Հաջորդ առաքելությանը ՀՀ ԱՎԾ-ն պետք է ներկայացնի statbank-ում հրապարակման պլան

- Ցուցանիշների վերլուծությունների հիման վրա ՀՀ ԱՎԾ-ն պետք է որոշի սոցիալական բացառումների և երեխաների սոցիալական բացառումների վերաբերյալ ցուցանիշների թիվը, որոնք պետք է հրապարակվեն ոչ ուշ քան 2017թ. վերջում: